

Ա. Ա. ՍԱՐԳՈՅԱՆ

ԻՆՉՊԵՍ ՑՈՒՏ ԱՏԱՆԱԼ
ԱՊԱՀՈՎԱԿՐԱԿԱՆ ՎԱՐԺԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

368
Ս-25

ՀՐԱ.ՏԱ.ՐԱ.ԿՈՒՄԲԱՀԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՐԴԱՔԱՆ

ՅԵՐԵՎԱՆ



1937

368

v-25

Մ

ՑԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Այս գրքույկում մենք կպատմենք կոլտնտեսության-ներին, կոլտնտեսականներին և մենասմնտեսներին այն ժամին, թե ինչ պետք է իմանալ և անել, վորպեսզի հեշտությամբ ստանալ կրակից, փոթորիկներից, տարափից, ցրտահարումից, թրջումից, անասունների անկումից, հըրդիներից և այլ տարերային աղետներից առաջացած վիասներն:

Վորպեսզի պարզ լինի ու հեշտ լինի կարգալը մենք այստեղ կպարզաբանենք մի քանի բառեր, վորոնք գործեն ածվում ապահովագրական գործում՝

1. Կոպարային ապահովագրական նորմա — զա այն գումարն ե, վորով անասունները, ցանքերը, շենքերը և այլ գույք ապահովագրվում են պարտադիր կարգով:

2. Ապահովագրական վճարում — զա այն վճարումներն են, վոր կոլտնտեսությունները, կոլտնտեսականներն ու մենասմնտեսները պարտավոր են յուրաքանչյուր տարի մուծել Պետապին ապահովագրված գույքի համար Որինակ, կոլտնտեսականի կովի ապահովագրական վճարումը կազմում է տարեկան 6 ռ. 09 կոպ., այդ նշանակում ե, վոր կոլտնտեսականը պետք է վճարի իր կովի ապահովագրության համար տարեկան 6 ռ. 09 կ.։

3. Վնասների լուծարում — այս բառերով կոչվում են այն բոլոր գործողությունները, վոր պետք է կտարի

Տեք. Հեավոր. և սրբագր. Ա. Հայովերդուն

ՈԵԿԱՄ-ՀՐԱՄ-ԲԺՇԿԻ

Թաղվար № 2260.

Գյուղհետի տպարան, Ցերեան

Պատվեր № 50—64,

Տիրաժ 2000

26 JUL 2013

43. 960

գյուղական կամ շրջանային ապահովագրական հանձնաժողովը, վորպեսզի վորոշի, թե վորքան պետք ե վճարել տուժած կոլտնտեսությանը, կոլտնտեսականին կամ աշխատավոր մենատնտեսին:

4. Ապահովագրական վարձատրություն — դա այն գումարն է, վորը վճարում է Պետապը կոլտնտեսությանը, կոլտնտեսականին կամ մենատնտեսին դժբախտ դեպք՝ անասունների անկում, հրդեհ, կարկտահարում և այլն պատահելիս:

Այսուղ պետք ե ասել, վոր ապահովագրական վարձատրությունը չպետք ե ապահովագրական գումարից (ապահովագրական նորմա) և վնասված կամ փչացած գույքի խելական արժեքից ավելի բարձր լինի: Յեզ դա ճիշտ է, քանի վոր ապահովագրության հաջին շահվել չի կարելի: Այս կանոնը պետք ե միշտ հիշի յուրաքանչյուր կոլտնտեսություն, կոլտնտեսական և մենատնտես:

Գ Լ Ո Ւ Խ 1

ԻՆՉՊԱՍ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼ ԳՅՈՒՂԱ-
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆԱՍՈՒՆՆԵՐ ՍԱՏԿԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

Պետք ե լավ իմանալ, թե վոր դեպքերում է Պետապըն ապահովագրական վնասներ հատուցում տուժած տնտեսությանն անասուններ սատկելիս և վոր դեպքերում չի հատուցում:

Պետապն անամնատիրոջն ապահովագրված անասունի անկման համար վարձատրություն տալիս է այն դեպքերում միայն, յեթե այդ դեպքն անամնատիրոջ՝ առանձին կոլտնտեսության, կոլտնտեսականի և մենատնտեսի կամքից անկախ պատճառների հետևանք է յեղել, այսինքն՝ 1) հիվանդության, բնական մահվան, 2) դժբախտ դեպքի (շանթահարման, հեղեղումի, յերկրաշարժի, հրդեհի և այլն), 3) յեթե ապահովագրված անասունը մորթվել է անամնաբուժի կամ անամնաբուժակի կարգադրությամբ վարակիչ հիվանդություն վորոշելու կամ կանխելու նըպատակով:

Ահա թե վոր դեպքերումն է Պետապն ապահովագրական վարձատրություն տալիս գյուղատնտեսական անասուններ ապահովագրելու գծով:

Իսկ վոր դեպքերում Պետապն ապահովագրական վարձատրություն չի վնարում սատկած անասուների համար:

Պետապը կոլտնտեսությանը, կոլտնտեսականին և մենատնտեսին սատկած անասունների համար ապահովագրական վարձատրություն չի վճարում այն դեպքերում, յեթե անամնատերը մեղավոր է անասունի անկման համար

—այսինքն յեթե այդ տեղի յե ունեցել անասնատիրոջ
սիմալ գործողությունների կամ անհրաժեշտ միջոցներ ձեռք
չառնելու հետեվանքով՝ առաջին՝ յեթե անասունի մահվան
պատճառը յեղել ե հիվանդություն կամ այնպիսի դժբախտ
գեղք, վորը տեղի յե ունեցել բացահայտ անտնտեսվարու-
թյան՝ անասունի ուժասպառ լինելը — թերի կերակրելու,
կեղտուս կեր տալու, սիմալ լծելու, անհրաժեշտ շենքում
պահելու, հիվանդ անասունին վատ խնամելու, անասնաբու-
ժին, անասնաբուժակին կամ գյուղխորհրդին անասունի
հիվանդության մասին չհայտնելու հետեվանքով։ Ընդհան-
րասլես, յուրաքանչյուր անասունի՝ թե ապահովագրված
և թե չափահովագրված, որինակ, մատղաշ անասու-
նի հիվանդանալու մասին անասնատերը պարտավոր ե
իսկույն հայտնել անասնաբուժական անձնակազմին կամ
գյուղխորհրդին։ Այդ շատ անհրաժեշտ ե, վորովհետեւ
յուրաքանչյուր հիվանդություն կարող ե վարակիչ լինել
(ժանտախտ, սիրիրախտ, խլախտ և այլն) և մի գուցե
անհրաժեշտ կինի վարակված անասունին անմիջապես
սպանել վորպեսզի փրկված լինեն մնացած անասունները։
Իսկ յեթե նույնիսկ հիվանդությունը վարակիչ չե, այն-
ուամենայնիվ պետք ե անասնաբուժական շտապ ոգնու-
թյամբ թույլ չտալ վոր անասունը սատկի։

Յեթե անասնաբուժական հսկողությունը վորոշում
ե, վոր հիվանդությունը վարակիչ չե, ապա հիվանդ անա-
սունի տերն ու այլ անասնատերեր պետք ե պահպանեն
բուժման նախազգուշական այն բոլոր միջոցները, վոր
ցույց կտա անասնաբուժը։ Յերկրորդ՝ յեթե անասունի
մահը տեղի յե ունենում անխնա շահագործման կամ վը-
նասարար վերաբերմունք ունենալու հետեւնքով, որինակ,
անասունին նրա ուժից վեր աշխատեցնելու, ծեծելու,
խիստ քշելու, վսասակար կեր տալու, տաքացած և քրրտ-
նած անասունին սառը ջուր տալու և այլն։ Յերրորդ՝
յեթե անասնաբուժը կամ անասնաբուժակը վորոշում

ե, վոր սատկած անասունը վարակված ե յեղել այն պատ-
ճառով, վոր նրա տերը չի պահպանել վարակիչ հիվանդու-
թյունների գեմ պայքարելու վերաբերյալ պարտադիր վո-
րոշումներն ու անասնաբուժական սանիտարական կանոն-
ները։

Այս դեպքերում վոչ միայն ապահովագրական վար-
ձատրություն չի վճարվում, այլև յեթե գյուղական ա-
պահովագրական հանձնաժողովը սատկած անասունների
մասին ակտ կազմելիս, ինչպես նաև Պետալի տեսուչը
կամ շըջանային ապահովագրական հանձնաժողովը ակտն
ստանալիս և հաստատելիս վորոշում ե, վոր կոլտնտե-
սային անասունի անկումն անտնտեսվարության, վեստա-
րար գործողությունների կամ անխնա շահագործման
հետևանք են յեղել, ապա շըջանային ապահովագրական
հանձնաժողովն այդ մասին հատուկ վորոշում ե կայաց-
նում, վորի մասին անմիջապես հայտնում ե գտատիտղա-
կան հսկողությունը մեղավորներին պատասխանատվության
յենթարկելու համար։ Ի հարկե, այդ այդպես ել պետք ե,
վորովհետեւ, կոլտնտեսային գույքը պետք ե պաշտպանել,
իսկ նրանք, ովքեր այդ գույքը չեն պաշտպանում, ժողո-
վրդի թշնամին են, կոլտնտեսային կարգերի թշնամի։

Բացի այդ, անկախ անասունի անկման պատճառնե-
րից, սատկած գյուղատեսական անասունների համար
ապահովագրական վարձատրություն չի տրվում այն դեպ-
քերում, յեթե նրանց տերերը՝ կոլտնտեսությունները, կոլ-
տնտեսականներն ու մենատնտեսները չեն կատարում իրենց
համար սահմանված պարտադիր կանոնները։ Առաջին՝ յեթե
անասունների անկման ակտեր կազմելիս հայտաբերվում
ե, վոր անասունների ցուցակագրման (հաշվառման) ժա-
մանակ, վորը կատարվում է տարեկան մեկ անգամ, պար-
տադիր ապահովագրության գծով, տվյալ տնտեսության
մեջ ապահովագրումից թաղցված են յեղել տվյալ տեսա-
կի անասուններ։ Այդ, ի հարկե, միանգամայն ճիշտ ե,

յեթե թագցրել ե հաշվառումից, ուրեմն և չի ապահովագրել, իսկ յեթե չի ապահովագրել, ուստի և վոչինչ չըպետք ե ստանա: Ի՞նքնըստինքյան պարզ ե, վոր այդ պատիժը (ապահովագրական վարձատրությունից զրկելը) արգում այն դեպքերում միայն, յեթե անասունին թագցրել են դիտագորյալ կերպով, այլ վոչ պատահաբար: Պատահականության, ակամա սխալի համար կոլտնտեսությունը, կոլտնտեսականը և մենատնտեսը չպետք ե տուժեն:

Տերկորդ՝ յեթե գյուղատնտեսական անասունի մահվան մասին 24 ժամվա ընթացքում կոլտնտեսականներն ու մենատնտեսները չեն հայտնում գյուղխորհրդին, իսկ կոլտնտեսությունները՝ գյուղխորհրդին և ապահովագրական տեսչին: Ապահովագրվողն այդ ժամկետը չպետք է խախտի, գյուղատնտեսական անասունի մահվան մասին, նա միշտ պետք ե հայտնի 24 ժամվա ընթացքում:

Յերրորդ՝ յեթե շրջանային ապահովագրական հանձնաժողովի կողմից արդեն իսկ հաստատված ակտով այդ ակտի հաստատման որվանից վեց ամսվա ընթացքում, պահանջ չի առաջադրված ապահովագրական վարձատրություն վճարելու մասին:

Չորրորդ — այն դեպքում, յեթե անասունը տնտեսական նկատառութներով կամ դժբախտ պատահարի հետեւ վանքով մորթված ե վորպես մսացու, կամ յեթե մորթված անասունի միսը պիտանի յե ճանաշված ուտելու համար: Ի հարկե, այդ ել ճիշտ ե: Չե վոր ըստ կանոնների ապահովագրությունը կնքվում ե անասունները սատկելու դեպքերի համար միայն: Անասունին գողանալու և նրա կորչելու համար Պետապը նույնպես պատասխանատու չե: Տիրոջ համար անասունը կորել ե, բայց Պետապը նրա համար վոչինչ չի վճարում, գտնելով, վոր անասունին պետք ե պաշտպանի նրա տերը, յեթե վատ ե ոլաշտպանել, ուրեմն ինքն ե մեղավոր:

Մենք արդեն ասացինք, վոր այն անասունները՝ վո-

վոնք յենթակա յեն պարտադիր կոպարային ապահովագրության, յուրաքանչյուր տարի պետք ե ցուցակագրը վեն կոլտնտեսության, կոլտնտեսականների և մենատընտեսների կողմից: Այդ տնասուններն, ի հարկե, ապահովագրված են համարվում են այն ել ձրիաբար ապահովագրված համարվում են այն անասունները, վորոնք ցուցակագրությունից հետո ամբողջ տարվա ընթացքում ապահովագրական հասակի յեն համանում կամ, դիցուք, տնտեսությունը նոր անասուն ե գնում: Որինակ, կոլտնտեսական Մուշեղ կարապետյանը մայիս ամսում, ցուցակագրման ժամանակ ունեցել ե մեկ կով 5 տարեկան և յերկու ամսական հորթ: Ուրեմն, կարապետյանի միմիայն մեկ կովն ե ապահովագրված յեղել, վորի համար նա վճարել է Պետապին 6 ո. 9 կ. ամբողջ տարվա համար: Կոլտնտեսական կարապետյանը նոյեմբեր ամսում գնել ե ևս մեկ կով, իսկ հորթը դարձել ե 8 ամսական: Այսպիսով կարապետյանն ունի 2 կով և մեկ հորթ ութ ամսական և դրանք բոլորն ե ապահովագրված են համարվում թեև նա իր մեկ կովի ապահովագրության համար և միայն վճարել Ուրեմն, յեթե, դիցուք, դժբախտ դեպքի հետեւ վանքով սատկեն այդ յերեք անասունները, ապա Պետապը նրանց բոլորի համար ել պետք ե վճարի:

Բոլորն ել այժմ լավ գիտեն, վոր յուրաքանչյուր սատկած անասունի համար անպայման պետք ե ակտ կազմել և այդ ակտը կազմում ե գյուղական կամ շրջանային ապահովագրական հանձնաժողովը: Թեև ակտի ձըշտության համար պատասխանատու յե հանձնաժողովը, բայց և այնպես որենքով ակտը կազմելու ժամանակ անպայման պետք ե ներկա լինի անասնատերը՝ կոլտնտեսություններում վարչության նախագահը, իսկ կոլտնտեսականի կամ մենատնտեսի տնտեսություններում — անտեսության գլուխը: Ակտ կազմելու և անասունների

անկման պատճառու պարզելու համար, հանձնաժողովը դեպքի վայրը մենում է վոչ ուշ քան սատկած անասունի տիրոջից տեղեկություն ստանալուց 24 ժամվա ընթացքում: Դրա համար ել անասնատերը՝ կուտնատեսությունը, կոլտնտեսականը կամ մենատնտեսն անպայման պետք է հանձնաժողովին առաջադրի սատկած անասունի դիակն, այլապես հանձնաժողովը ակտ կազմելու իրավունք չունի: Ի հարկե, յեթե անասունը սատկել է վարակիչ հիվանդությունից և զա հաստատված է անասնաբուժի կամ անասնաբուժակի կամ ել գյուղխորհրդի նախագահի կողմից, ապա անասնատերն անպայման պետք է հետացնի դիակը կամ թաղի գյուղխորհրդի նախագահի և յերկու կամ յերեք վկաների ցուցումով և ներկայությամբ:

Բոլոր կազմված ակտերն ուղարկվում են շրջանային ապահովագրական տեսչությանը: Այնուհետև, այդ ակտերը քննվում են շրջանային ապահովագրական հանձնաժողովի նիստերում, հաստատվում են կամ մերժվում: Այդ վորոշումների մասին անասնատերը պետք է իրազեկ լինի, ուստի ապահովագրական տեսչությունը որպա ընթացքում այդ մասին անպայման նրան հայտնում է:

Ապահովագրական տեսուչը պարտավոր է տուժած տրնտեսության վնասները վճարել որենքով սահմանված ժամկետներում, այն ե՝ կոլտնտեսությանը՝ ակտը հաստատելուց հետո 5 որվա ընթացքում, կոլտնտեսականին՝ 10 որվա ընթացքում և մենատնտեսին՝ 15 որվա ընթացքում: Հետեւ յեթե տուժած տնտեսությունը ժամանակակից ստանում իր ապահովագրական վարձատրությունը, ապա նա, ի հարկե, պետք է պահանջի, վոր անմիջապես վարձին:

ԳԼՈՒԽ 2

ՎԱՅՈՎԱԾ ԳՅՈՒՊԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՐՉԱ-
ՏՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ

Բոլորն ել լավ զիտեն, վոր մինչև 1934 թ. գյուղատնտեսական մշակույթները չնշանակում ապահովագրվում ելին, գլխավորապես, կարկտահարումից: Սակայն, կուտնատեսությունների, կոլտնտեսականների և մենատընտեսների ցանկությամբ 1935 թից գյուղատնտեսական մշակույթներն ապահովագրվում են:

Առաջին. Հացահատիկային և բակլային մշակույթների ցանքերը՝ բուսանոցը, բանջարանոցը, խաղողի և պտղատու այգիների բերքը կարկտահարումից, տարափից, փոթորիկներից, ցրտահարումից, թթվումից, փըտումից և հեղեղումից, իսկ կոլտնտեսություններում՝ նաև շնձված ցանքերը հրդեհից:

Յերկրորդ՝ ծիսախոտի և բամբակի ցանքերը բուր տարերային աղետներից, ինչպես նաև այդ մշակույթների վնասատուներից և հիվանդություններից: Իսկ յեթե ցանքերը տուժել են այլ պատճառներով, ապա, պարզ ե, վոր Պետապը պատասխանատու չե և վնասներ չի վճարում: Շատ հաճախ ատում են, վոր, «աշնանացան ցորենի ցանքերը տուժել են յերաշտից և Պետապը պետք է ապահովագրական վարձատրություն վճարի», բայց նրանք մոռանում են, վոր ցորենի և գարու ցանքերը յեշաշտից չեն ապահովագրվում: Կամ թե շատ հաճախ մենք լսում ենք, վոր, «պատղատու ծառերը կամ խաղողի վազերը փրչացել են ցրտերից, հետեւ պահանջում են մոռանում են, վոր Պետապը վոչ թե ծառեր և վաղեր և ապահովագրում, այլ պտղատու և խաղողի ալղիների բերքը միայն»: Այլ

քան ե, յեթե կոլտնտեսություններն ու կոլտնտեսական-ները պահանջ դնեն, վոր գյուղատնտեսական մշակույթ-ներն ապահովագրվի բոլոր տարերային աղետներից և Պետապլ դրան համաձայնվի, այդ դեպքում, ի հարկե, նա պարտավոր ե վճարել նաև այլ պատճառներից առաջացած վնասները, որենքը հրապարակելուց հետո:

Յեր ե սկսվում յեվ յերբ վերջանում ապահովագրու-
րյունը

Ապահովագրական որենքներով ճշտորեն վորոշված ե,
թե յերբ ե սկսվում Պետապի պատասխանատվությունը և
յերբ վերջանում ապահովագրությունը ծանովի (դաշտա-
լին և բանջարանոցային) գյուղատնտեսական մշակույթ-
ների (ցորենի, գարու, լեգիպտացորենի, կարտոֆիլի և
այլն) վերաբերմամբ ապահովագրական պատասխանատվ-
վությունը սկսվում ե ծլելու որվանից միայն, իսկ մինչև
ծլելը ցանքերը չեն համարվում ապահովագրված: Շատ
հաճախ ցանքերը զանազան պատճառներից (յերաշտից և
այլն) մինչև ծլելն փչանում են, իսկ ցանքատերերն ա-
պահովագրական վարձատրություն են պահանջում Պետա-
պից: Ի հարկե, դա միանգամայն սխալ է:

Տունկալին մշակութների վերաբերմամբ, վորոնք
զարգանում են սածիների ձեռք, որինակի, ծխախոտը,
կաղամբը, սրանց ապահովագրական պատասխանատվությու-
նը սկսվում ե սածիները տնկելու պահից միայն: Ալսպիսով,
յեթե մինչև տնկելը նրանք փչանում են, ապա Պետապը
պատասխանատվություն չի կրում:

Պտղատու այգիների վերաբերմամբ Պետապի պա-
տասխանատվությունն սկսվում ե ծաղկելու որվանից մի-
այն, այսինքն, ծաղկային բողբոջներ գոլանալու որվանից,
իսկ խաղողի այգիների վերաբերմամբ փնջեր տալու, այլ
խոսքով ծաղկելու պահից (соцветия):

Լինում են նաև դեպքեր, յերբ սաստիկ սառնամանիք-
ներից փչանում են պտղատու և խաղողի այգիներ, սա-
կայն, ինչպես մենք վերն ասացինք, Պետապը դրա հա-
մար պատասխանատվություն չի կրում, քանի վոր ծառերն
ու վազերը չեն ապահովագրվում, այլ ապահովագրվում
ե նրանց բերքը միայն:

Բացի այդ, ապահովագրությունը վերջանում ե այն
պահից, յերբ բերքը հավաքվում ե, այլ խոսքով, խոտհար-
քից, ցանքը հնձելուց, պտղատու և խաղողի այգիներում
պտղալներ քաղելուց հետո դրանք ապահովադրված չեն
համարվում:

Ինչ պետք ե անի կոլտնտեսությունը, կոլտնտեսականն ու
մենատնտեսը զյուղատնտեսական մշակույթները տարերային
աղետներից վնասվելուց նետա

Առաջին: Թույլ չտալ վորպեսզի տարերային աղետից
վնասված տարածության վրա անասունները տրորեն վողջ
մնացած գյուղատնտեսական մշակույթները և ըստ հստ-
րավորության վրկել լրացուցիչ մշակմամբ (բուկլեցով,
քաղհանով, վնասատուներից պաշտպանելով և այլն) ու
այդ մշակումը կազմակերպել ժամանակին և ճիշտ:

Յերկրորդ: Հստ հնարավորության շուտ, անհապաղ,
հայտնել գյուղխորհրդին (իսկ կոլտնտեսությունները, բա-
ցի այդ, պարտավոր են հայտնել նաև շրջանային ապա-
հովագրական տեսչին) տեղի ունեցած տարերային աղետի
մասին, ընդունում, այդ հայտարարությունն անպայման
պետք ե լինի գրավոր և համենայն գեպս վոշ ուշ քան
գյուղատնտեսական մշակույթները տարերային աղետնե-
րից վնասվելու հանգամանքը հաստատվելու պահից հինգ
որվա ընթացքում:

Եյդ հայտարարության մեջ պետք ե պարզուց և
ճիշտ ցույց տրված լինի, թե յերբ ե տեղի ունեցել տա-
րերային աղետը՝ կարկտահարումը, տարափը, փոթորիկը,
ցրտահարումը, հեղեղումը և այլն, վնասված տարածու-

թյան չափը, յուրաքանչյուր գյուղատնտեսական մշակույթի համար առանձին, վնասվածության մոտավոր աստիճանը, պահանջվում է արդյոք կրկնացան և ինչպիսի տարածության վրա, ինչպես նայել այս, թե արդյոք անհրաժեշտ է վնասների շտապ լուծարում։ Այս բոլորը շատ կարևոր են, քանի վոր շրջանային ապահովագրական հանձնաժողովը պետք է ստանա այս տեղեկությունները, վորպեսզի հնարավորություն ունենա ժամանակին մեկնել դեպքի վայրը և պարզել վնասների չափը։

Յերրուդ։ Վնասները լուծարելու ժամանակ տրամադրել լուծարքային հանձնաժողովներին և Պետապի որդաններին իր ունեցած բոլոր այս տվյալները, վորոնք վերաբերում են գյուղատնտեսական մշակույթների վչացած կամ վնասված տարածությանը և բացի այդ, ամեն տեսակ աջակցություն ցույց տալ շրջանային ապահովագրական հանձնաժողովին վնասների չափը վորոշելիս։ Այս բոլորն, իհարկե, արվում է ապահովագրվողների իրենց ոգտին, նրա համար, վորպեսզի վորքան կարելի յե շուտ և ճիշտ վորոշվի և վճարվի ապահովագրական վարձատրությունը։

Միաժամանակ, այստեղ պետք է ասել, վոր բոլոր տարածությունների և վնասների չափի մասին տրված հայտերն ու տեղեկությունները պետք է ճիշտ լինեն, քանի վոր կեզծ և հնարովի հայտեր տալու համար կոլտնտեսությունը, կոլտնտեսականն ու մենատնտեսը քրեական պատասխանատվության են յենթարկվում։ Յեկ դա միանգամայն ճիշտ ե, քանի վոր չի կարելի խարեբայությամբ պետությունից ստանալ այն, ինչ վոր չի հասնում։

Վեր դեպի երրում Պետապը չի հատուցում գյուղանեսեական մշակույթին պատճառած վնասները

Պետական ապահովագրությունը վարձատրություն չի վճարում գյուղատնտեսական մշակույթների՝ տարերային աղեաներից առաջացած վնասները հետեւյալ դեպքերում՝

Առաջին — յեթե գյուղատնտեսական մշակույթը վը չացել ե վոչ այն պատճառներից, վորոնցից Պետապն ապահովագրում է և ապա յեթե գյուղատնտեսական մշակույթը վչացել ե տիրոջ՝ կոլտնտեսության, կոլտնտեսականի և մենատնտեսի մեղքով, նրա բացահայտ անտնտեսվարության, այդ մշակույթների պաշտպանության բացակայության կամ դիտավորյալ գործողությունների հետևանքով։

Յերկրորդ։ Յեթե ցանքերը վերցված ե ապահովագրական պատասխանատվությունից շրջանային ապահովագրական հանձնաժողովի վորոշմամբ։

Բանը նրանում է, վոր շրջանային ապահովագրական հանձնաժողովին իրավունք է վերապահված ստուգելու ապահովագրված գույքի գրությունը։ Յեկ ահա, յերբ ապահովագրական տեսչությունը պարզում է, վոր կոլտնտեսությունը կամ կոլտնտեսականը (տնտեսության վոչ հանրախացված մասի վերաբերմամբ) կամ մենատնտեսը բացահայտ անտնտեսվար կամ վնասարար վերաբերմունք և ունեցել գեղի ապահովագրված գույքը, ապա շրջանային ապահովագրական հանձնաժողովը վորոշում և գաղարեցնել ապահովագրությունը մինչև նկատված բացերը վերացնելը։

Յերրուդ։ Յեթե վչացած գյուղատնտեսական մշակույթը կրկնացանված չի յեղել թեև ըստ տարվա ժամանակի այդ հնարավոր է յեղել։ Եինում են զեպքեր, յերբ շրջանային հանձնաժողովը, վորի կազմի մեջ մտնում են նաև հողբաժնի վարիչն ու շրջանային գյուղատնտեսը, առաջարկում են կրկնացանել վչացած գյուղատնտեսական մշակույթը, բայց ցանքատերը, կոլտնտեսությունը, կոլտնտեսականը կամ մենատնտեսը այդ չեն անում։ Դրա համար ել Պետապը, որինքի հիման վրա, ապահովագրական վարձատրություն չի տալիս։ Բոլորին ել հասկանալի յե, թե ինչու։

Չորրորդ. Պետապը վնասներ չի հատուցում այն դեպքիրում յերբ տնտեսությունը վնասված տարածության վրա ձեռք չի առնում բույսերի հետագա մշակման և խընամքի այն բոլոր ձեռնարկումները, վոր սովորաբար կիրառում են այլ տնտեսություններ տվյալ վայրում, վնասները պակասեցնելու համար, որինակ, բուկլից, քաղճան, ջրում և դա միանգամայն ճիշտ եւ Զի կարելի թույլ տալ, վոր ցանքատերը նման անտեսեսվար վերաբերմունք ցույց տա վնասված գյուղատնտեսական մշակույթին և վոչ մի միջոց ձեռք չառնի նրա հետագա մշակման ուղղությամբ:

Հինգերորդ. Յեթե տարերային աղետը տեղի յեւ նեցել տարվա այնպիսի ժամանակ, յերբ այդ շրջանի կամ գյուղի ու տվյալ տարվա պայմաններով վնասված գյուղատնտեսական մշակույթի բերքն արդեն պետք ե հավաքված լիներ: Յեվ դա միանգամայն ճիշտ եւ Դժբախտաբար կան զեռևս այնպիսի անտեսություններ, վորոնք չեն հետեւում իրենց գույքին, ժամանակին չեն հավաքում արդեն իսկ հասունացած բերքը և հանկարծ մի քանի որից հետո մի վորեև տարերային աղետից, դիցուք ուժեղ կարկըտից, փշանում և ամբողջ բերքը: Ինարկե, զրա համար վոչ միայն չպետք ե վնասներ հատուցել, այլ և անտեսուվարության համար պետք ե պատասխանատվության յենթարկել մեղավորներին:

Վեցերորդ. Յեթե վնասված տարածության վրա մինչև լուծարքային ակտ կազմելը տնտեսությունն անասուններ կարածացնի, բերքահավաք կկատարի խոտի, կանաչ կերի կամ սիլոսի համար, կամ ել թույլ կտա այնպիսի գործողություններ, վորոնք պակասեցնում են տարերային աղետից հետո մնացած բերքը: Այս ել միանգամայն ճիշտ է, քանի վոր չի կարելի բերքը հավաքել մինչեւ հանձնաժողովի կողմից վնասված մշակույթը զննելն ու վնասների տոկոսը վորոշել:

Յորերորդ. Վնասները չեն հատուցվում, յեթե գյու-

ղատնատեսական մշակույթների տերը՝ կոլտնտեսությունը, կոլտնտեսականն ու մենատնտեսը թագցնում են ցուցակագրությունից այն գյուղատնտեսական մշակույթների ցանքերը, վորոնք յենթակա յեն կոպարային ապահովագրության: Այս ել հասկանալի յեւ Յեթե թագցրել ես, ուրեմն գյուղատնտեսական մշակույթն ապահովագրված չի համարվում, հետևապես վնասները չեն կարող վճարվել:

Յետի հինգերորդ. Յեթե վնասված չեն հատուցվում, յեթե վնասված կամ փշացած գյուղատնտեսական մշակույթների տերը վնասի մասին չի հայտնում, գյուղատնտեսական մշակույթի վնասվելու հանգամանքը հաստատելուց 5 որվաընթացքում, ինչպես նաև յեթե հայտարարությունը վնասների մասին տրված և բերքահավաքից հետո: Ինքնըստինքյան պարզ ե, վոր ուշ տրված կամ բերքահավաքից հետո տրված հայտարարության հիման վրա չի կարելի ճիշտ վորոշել վնասի չափը, հետևապես, չի կարելի և վնասներ վճարել:

Գ. Ա. Խ. Խ. 3

ՀՐԱԵՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ ՅԵՎ ԱՅԼ, ՏԱՐԵՐՈՅԻ, ԱՂԵՏՆԵՐԻ, ԴԵՊՔՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆ ԾԱՆԱԼՈՒ ԿԱՐԳ:

Մենք բոլորս ել լավ պետք ե գիտենանք, վոր կոպարային կարգով կոլտնտեսություններում ապահովագրվում են զանազան տեսակի շենքեր, արդյունաբերական ձեռնարկություններ սարքավորման հետ, գյուղատնտեսական ինքնաշտար, տրանսպորտային միջոցներ, ապրանքներ և նյութեր, ինչպես նաև գաշտային ու մարգագետնային արտադրանք:

Մենք պետք ե գիտենանք նաև, վոր կոլտնտեսություններում այդ ամբողջ գույքն ապահովագրվում ե հրդեհից, կայծակահարությունից, հեղեղումից, յերկրաշարժից, փոքրկից, մըրկից, տարափից, անդումներից և փլզումնե-



ըից: Այսուհետև, Պետապը հասուցում է զնամները այն գեղքերում միայն, յեթե գույքի փշացման պատճառը թված տարերային աղեաներն են յեղել և դժբախտ գեղքերը, վորոնք տեղի յեն ունեցել ապահովագրվողից — գույքատիրոջից անկախ:

Առանձին կոլտնտեսություններ, լավ չիմանալով թե ինչից ե ապահովագրվում իրենց գույքը, պահանջում են Պետապից հասուցել զանազան տեսակի վնասներ, վորոնք առաջ են յեղել այնպիսի պատճառներից, վորոնցից այդ գույքն ապահովագրված չի յեղել:

Ահա ձեզ մի որինակ. —

Մի կոլտնտեսության ախոռի կառւը վլվել ե, քանի վոր շենքը հին ե յեղել և գերանները փտել են: Այդ կոլտնտեսությունը պահանջ ե առաջադրել վնասը վճարելու մասին: Բայց վորտեղ ե ասված, վոր ախոռն ապահովագրվում ե նրա կտորի քանդվելուց, վորը տեղի կունենա գերանների փտելուց:

Ի՞նարկե, Պետապը վնասները չի վճարի, քանի վոր դա տարերային աղետ չե, այլ ուղղակի անտնտեսվարություն.

Մի այլ կոլտնտեսություն պահանջում ե Պետապից վճարել այն գույքի արժեքը, վորը նրանից գողացել են: Այս դեպքում ել Պետապը մերժել ե, քանի վոր կոլտնտեսությունը, ինչպես նաև յուրաքանչյուր գույքատեր պարտավոր ե լավ պաշտպանել իր գույքը:

Ի՞նչ պետք ե տնի յուրաքանչյուր կոլտնտեսություն, կոլտնտեսական յեվ մենատնտեսարերային աղետներ կանխելու համար

Կենդանաբուծության վերելքի և զարգացման ու սոցիալիստական դաշտերի բերքատվության բարձրացման խնդիրը, նմանապես պայքարը մեր ամբողջ աշխատանքի վորակի համար, գյուղատնտեսության սոցիալիստական վե-

րակառուցման պլանում կենտրոնական տեղ են գրավում: Անասունների, ինվենտարի, մեքենաների, շենքերի և այլ գույքի լավագույն պահպանումը, ինչպես նաև ակտիվ պայքարն անասունների հոտի պահպանման և զարգացման համար, ագրոնոմիական և հակահրդեհային կանոնների կատարման համար, անշուշտ յուրաքանչյուր կոլտնտեսության, կոլտնտեսականի և մենատնտեսի կարևորագույն խնդիրներից մեկն ե հանդիսանում: Ուստի, կոլտնտեսությունը, կոլտնտեսականն ու այլ աշխատավորներ, պարտավոր են պահպանել այն՝ հակահրդեհային կանոնների համաձայն և բոլոր անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել հրդեհները կանխելու և իրենց գույքն ամեն տեսակի վնասներից և վչացումից պաշտպանելու համար:

Մասնավորապես կոլտնտեսություններն ու կոլտնտեսականները, պետք ե հետեւ՝ վորպեսզի՝ առաջին, ծըխանցքներն ու վառարանները, ինչպես նաև լուսավորությունը կանոնավոր լինեն, յերկրորդ՝ զգուշաբար վարվեն կրակի հետ, յերրորդ՝ խոտի դեղերի, ամբարների և պահանջմանների մոտ խարույկներ չվառեն և ծծիւն, չորրորդ՝ ցորեն կալսելու ժամանակ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնեն կայծերից ու այլ պատճառներով առաջացող հըդդեհների զեմ, նինգերորդ՝ շարժիչների, տրակտորների մոտ վառելիքի ապահով պահեստներ շինվեն կերոսինի, նավթի, բենզինի և այլն համար և վերջապես, յերեխաները շնազան կրակի հետ.

Շատ բնական ե, վոր այս պահանջները չկատարելու դեպքում, հաճախ հրդեհներ են առաջանում, վորոնք վաշնչացնում են ամբողջ գույքը: Սովորաբար կոլտնտեսային ունեցվածքը կենտրոնացած ե լինում մեկ տեղում՝ այստեղ ե և խոտը, և անասունների ախոռը, այստեղ ե և պահեստը և այլն: Այժմ քիչ չեն միլիոնատեր կոլտնտեսություններ և դրանց թիվը որ-ըստ-որե ավելանում ե: Այդ

ամբողջ միլիոնավոր գույքը պետք ե ուշի-ուշով պաշտպանել ինչպես դասակարգային թշնամուց, նույնպես և հրդեհներից ու տարերային աղետներից:

Ինչ պարտականություն ունեն կոլտնտեսությունն, կոլտնտեսականը յեվ մենատնտեսը հրդեհ, հեղեղում յեվ այլն տռաջանալու դեպքում:

Մենք բոլորս ել գիտենք, վոր վորքան ել լավ են պաշտպանում գույքը, այնուամենահիվ տեղի լին ունենում դժբախտ դեպքեր և տարերային աղետներ՝ հրդեհներ, հեղեղումներ, լերկրաշարժներ և այլն, վորոնք մեծ վնասներ են պատճառում տնտեսությանը:

Յեվ ահա լերբ կոլտնտեսության մեջ նման աղետ և պատահում և վնասներ պատճառում նրան, կոլտնտեսության վարչությունը պարտավոր ե՝ առաջին՝ անմիջապես և համենախնդեպս վոչ ուշ քան հրդեհի կամ այլ տարերային աղետի տեղի ունենալուց հետո լերկու որվա ընթացքում, դրավոր հայտնել այդ մասին շրջանալիին ապահովագրական տեսչությանը:

Շրջանային ապահովագրական հանձնաժողովի աշխատանքը թեթևացնելու համար, այդ հայտարարության մեջ պետք ե մանրամասն ցույց տրված լինի թե ինչպիսի տարերային աղետ (հրդեհ, հեղեղում և այլն) ե տեղի ունեցել և լերբ։ Բացի այդ, պետք ե ճշտորեն նշված լինի թե ինչպիսի գույք ե վնասվել կամ փշացել ու պատճառած վնասի լենթաղրվող գումարը, Յերկրորդ — բոլոր անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել, վորպեսզի պակասի վնասների չափը, այն ե՝ փրկել գույքը, նախապահպաննել այն հետագա փշացումից, Յերրորդ — պահպանել վնասված գույքի մնացորդները մինչև շրջանալին ապահովագրական հանձնաժողովի գալն ու լուծարքային ակտ կազմելը։ Վերջապես կոլտնտեսության վարչությունը պետք ե կազ-

մակերպի իր գույքի պաշտպանության գործն, ինչպես հրդեհի, հեղեղումի և այլ աղետի ժամանակ, նույնպես և դրանից հետո Հատուկ ուշադրություն պետք ե դարձնել այնպիսի առարկաների վրա, վորոնք շրւտ են փչանում, այն ե՝ սերմացվի, հացահատիկի, ալլուրի, բամբակի, ծըխախոտի և այլն գլուղատնտեսական արդյունքների, ինչպես նաև գլուղատնտեսական մեքենաների, ինվենտարի վրա։

Այս բոլորը շատ կարևոր են։

Շատ անգամ հրդեհի ժամանակ մի վորեւ առարկա կրակից չի փչանում, այլ թրջվում ե միայն և յեթե ժամանակին մաքրվի կեղտից, ապա կարելի յե փրկել և վոր մի վնաս չի լինի։

Վոր դեպիերում ե կոլտնտեսությունը գրկում ապահովագրական վարչություն ստանալու իրավունքից հրդեհի, հեղեղվան, յերկրաշարժի յեվ այլ տարերային աղետների պատճառած վնասների համար, վորոնցից ապահովագրված ե այդ գույքը։

Մենք արդեն ասացինք, վոր ապահովագրական վարձատրություն չի տրվում այն բոլոր դեպքերում, յերբ գույքը վնասվում կամ փչանում ե ապահովագրվողի՝ կոլտնտեսության և այլ տնտեսության մեղքով, այսինքն՝ առաջին — յեթե վնասն տեղի յե ունեցել բացահայտ անտընտեսվարության և հանրալին սեփականության պաշտպանության բացակայության հետևանքով, յերկրորդ — յեթե վնասված տնտեսությունը չի պահպանել հակահրդեհալին պաշտպանության կանոնները, կոպիտ անզգուշությամբ և վարպել կրակի հետ, այսինքն, անկանոն ե պահել ծխնելուցները, վառարանները, խարուրի ե վառել շենքի, խոտագեղի մոտ, անզգույց ե պահել կերոսինը, նավթը, բենզինը և այլն, վորից հրդեհ ե առաջացել, յերրորդ — յեթե

դույքատերը հրդեհել ե ապահովագրված գուլքը: Բացի
ալդ, ապահովագրվողը վարձատրություն չի ստանում այն
գեղքում, յեթե թագցնում ե ցուցակագրությունից այն
գույքը, վորը յենթակա լե պարտագիր ապահովագրության:
Յեթե տուժած անտեսությունը լերկու որվա ընթացքում
չի հալունում իր կրած զաւաների մասին:

Սյսեղ մի անգամ յեփս պետք է հիշեցնել, վոր ապահովագրական վարձատրությունը չի կարող վաստուել վճառված կամ փչացած գույքի ապահովագրական գումարից յեփ խսկական արժեքից ավելի բարձր լինել: Ուստի, յերբ կոլտնեսությունը կամ այլ սնտեսություն իր վճառների մասին կեղծ տեղեկություններ է տալիս ապահովագրական վարձատրություն ստանալու համար, ապահու վոչ միայն գրկում է այդ վարձատրությունից, այլ յեփ քենական պատասխանատվության և յենքարկվում: Ցեղ գա միանգամման ճիշտ ե, քանի վոր նա ուզում ե ստանալ պետությունից այն, ինչ վոր նրան չի հասնում:

Պետապը խսորեն հետեւում է, վորպեսզի նրա ցշանային տպահովագրական տեսչությունները չձգձգեն վճառերի վճառումը: Յուրաքանչյուր կոլտնեսությունն, կոլտնեսական կամ մենատնես, յերե նրա կրած վճառները ժամանակին չեն վճարում պետք է բողոքի Պետապի Վարչությանը հետեւյալ հաւաքեյով՝ Յերեվան, Նալբանդյան փողոց № 64:

Բոլոր սահմած բողոքները ժննվում են վայ ու բան
10 որպա՞ թիթացիում:



ՀՀ Ազգային գրադարան



NL0221808

ԴԻՆ 30 ԿՈՊ.

М. А. САРКИСЯН

**Как скорее получить страховое
вознаграждение**

Реклам-Издат-Бюро—Ереван 1937 г.